



<i>Համարը N 26-Ն</i>	<i>Տեսակը Հիմնական</i>
<i>Տիպը Հրաման</i>	<i>Կարգավիճակը Գործում է</i>
<i>Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2022.10.31-2022.11.13 Պաշտոնական հրապարակման օրը 09.11.2022</i>	<i>Ընդունման վայրը Երևան</i>
<i>Ընդունող մարմինը Քաղաքաշինության կոմիտեի նախագահ</i>	<i>Ընդունման ամսաթիվը 03.11.2022</i>
<i>Ստորագրող մարմինը Քաղաքաշինության կոմիտեի նախագահ</i>	<i>Ստորագրման ամսաթիվը 03.11.2022</i>
<i>Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.11.2022</i>	<i>Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

Ծանուցում

Սույն հրամանի պահանջները չեն տարածվում մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելը սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀԾՆ 12-01-2022 «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ» ՀՀ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 01-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

03 նոյեմբերի 2022 թ.
ք. Երևան

N 26-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՀԾՆ 12-01-2022 «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 01-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5.1-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը

Հրամայում եմ՝

1. Հաստատել ՀՀԾՆ 12-01-2022 «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր» Հայաստանի

- Հանրապետության շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀՇՆ 12-01-2022 «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների, այդ թվում՝ վարկային, դրամաշնորհային միջոցների (եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ), համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքների տևողության հաշվարկների վրա:
3. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պատվիրատուների կողմից գնման պահանջի անհրաժեշտությունից ելնելով ձեռք բերվող նախագծային աշխատանքների տեխնիկական բնութագրի մշակման շրջանակներում նախագծման տևողության հաշվարկում թույլատրվում է կիրառել մինչև 25% նվազեցում:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 27-ի «Տարբեր նշանակության օբյեկտների նախագծային աշխատանքների տևողության ժամանակավոր նորմերը հաստատելու մասին» N 01-Ն հրամանը:
5. Սույն հրամանի պահանջները չեն տարածվում մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. Ղուլարյան

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2022 թվականի նոյեմբերի 3-ի
N 26-Ն հրամանի

ՀՀՇՆ 12-01-2022 «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. ՀՀՇՆ 12-01-2022 «Նախագծային աշխատանքների տևողության նորմեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը (այսուհետ՝ Նորմերը) կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքների և համայնքների գլխավոր հատակագծերի, տարածական պլանավորման փաստաթղթերի, բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների, դրանց համալիրների շինարարության (այդ թվում՝ վերակառուցման, հիմնանորոգման, վերազինման) նախագծերի մշակման աշխատանքների տևողության միջին ժամկետների հաշվարկման համար:
2. Նորմերը չեն տարածվում պատմամշակութային օբյեկտների գեղարվեստական վերականգնողական, հիդրոտեխնիկական կառույցների նախագծային աշխատանքների վրա՝ պայմանավորված նախագծային առաջադրանքների ձևավորման փուլում հետազոտական, հետախուզական, կազմակերպական, ելակետային տվյալների հավաքագրման յուրահատկություններով:
3. Նորմերի կիրառումը սահմանում է նախագծային աշխատանքների կատարման օբյեկտիվ ժամկետներ՝ իրավական հիմք ստեղծելով նախագծի կատարման ժամկետների վերաբերյալ պատվիրատուի և կատարողի միջև ծագած տարաձայնությունների հաղթահարման համար:

2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

4. Նորմերի մշակման ընթացքում օգտագործվել են հետևյալ իրավական ակտերը.

1) ՀՀ կառավարության 2021 ապրիլի 15-ի N 600-Ն որոշում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 757-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » N 600-Ն որոշում

2)	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19 ի N 596-Ն որոշում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում
3)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N 19-Ն հրաման	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետա-շինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 19-Ն հրաման
4)	ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29 «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փարձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին » N 1920-Ն որոշում
5)	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին », N 128-Ն հրաման
6)	ՀՀԾՆ 10-01-2014	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 3-ի «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգի Հիմնական դրույթներ», N 65-Ն հրաման
7)	ՀՀԾՆ 31-03-2020	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմեր
8)	ՀՀԾՆ 20.04-2020	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր
9)	ՀՀԾՆ 30-01-2014	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր

10)	ՀՀՇՆ IV-11.03.01-04 (ՄՄՆ 3.02.01-2002)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի մարտի 3-ի N 16-Ն հրամանով հաստատված «Արտադրական շենքեր» շինարարական նորմեր
11)	ՀՀՇՆ 31-01-2014	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 31-ի N 93-Ն հրամանով հաստատված «Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմեր
12)	ՀՀՇՆ IV-11.05.02-99	ՀՀ քաղաքաշինության նախարարության կոլեգիայի 1999 թվականի դեկտեմբերի N 5 որոշմամբ հաստատված «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմեր

3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Սույն նորմերում կիրառվել են հետևյալ հասկացությունները՝

1) **մինչնախագծային աշխատանքներ**՝ մասնագիտական հետազոտական աշխատանքներ (ինժեներագեոդեզիական, հիդրոերկրաբանական, չափագրական-կոնստրուկտորական), որոնք Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանի հավելվածի «Ընդհանուր դրույթներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ ի թիվս ելակետային այլ տվյալների, հիմք են հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման համար,

2) **նախագծային աշխատանքների տևողություն** կամ նախագծման տևողություն՝ այն ժամանակն է, որն անհրաժեշտ է օբյեկտը որպես մեկ ամբողջություն նախագծելու համար,

3) **օրացուցային գրաֆիկ**՝ նախագծային աշխատանքների պլանավորման կարևորագույն փաստաթուղթ, որը տեսանելի ցուցադրում է աշխատանքների կատարման ժամկետները, գերակայությունները, հաջորդականությունը և այլ չափորոշիչներ,

4) **ցանցային գրաֆիկ**՝ նախագծման արտադրական գործընթացի դինամիկ մոդել, որն արտահայտում է նախագծային աշխատանքների հաջորդականությունը և դրանց փոխկապակցվածությունները,

5) **Ն**՝ սույն նորմերի աղյուսակներում՝ ՆԱԽԱԳԻԾ բառի հապավումն է, որը երկու փուլով մշակվող նախագծային փաստաթղթերի առաջին փուլի անվանումն է,

6) **ԱՓ**՝ երկու փուլով մշակվող նախագծային փաստաթղթերի երկրորդ փուլի անվանումն է՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՏԱԹՂԹԵՐ,

7) **ԱՆ**՝ մեկ փուլով մշակվող նախագծային փաստաթղթերի անվանումն է՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Սույն նորմերը մշակվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանով հաստատված կանոնների համաձայն.

1) երկու փուլով նախագծելու դեպքում՝ մշակվում են նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր,

2) մեկ փուլով նախագծելու դեպքում՝ մշակվում է աշխատանքային նախագիծ:

7. Աղյուսակներում շենքերի, շինությունների տիպերն ու անվանումներն ընդունված են ՀՀ կառավարության 15 ապրիլի 2021 թվականի N 600-Ն որոշմանը համապատասխան:

8. Սույն նորմերով հաշվարկված նախագծային աշխատանքների տևողությունը կարող է վերանայվել աշխատանքների կատարման ընթացքում, եթե.

1) հայտնաբերվել է նախագծային լուծում պահանջող նոր տեղեկություն, որն արտացոլված չի եղել ելակետային տվյալներում (օրինակ՝ գծային ենթակառուցվածքի օբյեկտ կամ դրա տարր),

2) ծագել են իրավական բնույթի խնդիրներ, որոնց վերաբերյալ օրենքով սահմանված կարգով վարույթ է հարուցվել և աշխատանքները պետք է դադարեցվեն:

9. Նախագծային և մինչնախագծային աշխատանքների տևողությունները կոնկրետ օբյեկտների նախագծման տեխնիկական բնութագրերի մշակման փուլում կարող են տարբերվել նորմատիվային միջին տևողությունից մինչև 25%-ի չափով (ինչպես կրճատման, այնպես էլ աճի ուղղությամբ):

10. Նախագծային աշխատանքների տևողությունը կարող է նվազեցվել կամ ավելացվել օբյեկտիվորեն ակնառու պայմանների առկայության պարագայում:

11. Տևողության նորմերի հաշվարկի վրա ազդեցություն ունեն հետևյալ ֆունկցիոնալ կախվածությունները.

1) նախագծի առանձին մասերի վրա ծախսվող ժամանակը,

- 2) աշխատանքների ընդհանուր աշխատատարությունը,
- 3) նախագծման գործընթացների համատեղման տեխնոլոգիական հնարավորությունը:
12. Նախագծման տևողության հաշվարկները նախատեսվում են նորմատիվ փաստաթղթերով դրանց համար նախատեսված հիմնական ծավալի աշխատանքների կատարման համար և հաշվի չեն առնում այն ժամանակը, որն անհրաժեշտ է ծախսել լրացուցիչ աշխատանքների վրա, այդ թվում՝
- 1) էլակետային տվյալների հավաքագրում և վերլուծություն,
- 2) ինժեներական ցանցերին միացման տեխնիկական պայմանների ստացման համար ծանրաբեռնվածությունների հաշվարկ,
- 3) նախագծման առաջադրանքի կազմում և համաձայնեցում,
- 4) լիազորված (շահագրգիռ) մարմինների հետ նախագծային լուծումների համաձայնեցում,
- 5) նախագծի տարբերակների մշակում,
- 6) արտաքին ցանցերի նախագծում (շենքերի նախագծերի մշակման պատվերի դեպքում),
- 7) նախագծի լրամշակում նախագծման պայմանների փոփոխության պատճառով,
- 8) ոչ ստանդարտ սարքավորումների նախագծում,
- 9) արտադրվող հավաքովի կոնստրուկցիաների նախագծում,
- 10) շինհրապարակի (ուղեգծի) վայրի ընտրություն,
- 11) նախագծի փորձաքննություն և համաձայնեցում,
- 12) ցուցադրական նյութերի պատրաստում:
13. Նախագծի մշակման ընթացքում միջանկյալ համաձայնեցումների անհրաժեշտության դեպքում՝ դրա համար անհրաժեշտ ժամանակը գումարվում է սույն նորմերով հաշվարկված ժամկետներին: Համաձայնեցումների տևողություններն ընդունվում են ըստ համապատասխան լիազոր մարմինների համար սահմանված նորմերի:
14. Միասնական ճարտարապետական հորինվածքով կամ տեխնոլոգիական գործընթացով կապված՝ մի քանի օբյեկտներից բաղկացած բազմաֆունկցիոնալ համալիրի, ինչպես նաև համալիր աշխատանքների կազմում ինժեներական արտաքին ցանցերի նախագծեր ընդգրկող օբյեկտների նախագծման տևողությունը որոշվում է օբյեկտային գրաֆիկների հիման վրա՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ, օգտագործելով առանձին օբյեկտների և ինժեներական համակարգերի նախագծման տևողությունները և հաշվի առնելով համալիրի կազմում ընդգրկված օբյեկտների նախագծման գործընթացների համատեղման հնարավորությունը:
15. Հիմնական օբյեկտների, ներկառուցված կամ կցակառույց սենքերի և արտաքին ինժեներական ցանցերի նախագծման տևողությունների համատեղումն իրականացվում է աղյուսակ 1-ում բերված գործակիցների հիման վրա:

Աղյուսակ 1

Քաղաքացիական շինարարության հիմնական օբյեկտների, ներկառուցված կամ կցակառույց սենքերի և արտաքին ինժեներական ցանցերի նախագծման գործընթացների համատեղման գործակիցներ

Նախագծման Փուլը	K _{համ} գործակցի մեծությունը	
	Արտաքին ցանցեր	Ներկառուցված կամ կցակառույց սենքեր
1	2	3
Նախագիծ	0,3	0,5
Աշխատանքային փաստաթղթեր	0,3	0,55
Աշխատանքային նախագիծ	0,35	0,6

16. Օբյեկտի նախագծման ամբողջական տևողությունը ձևավորվում է նախագծի այն բաժնի մշակման տևողության հիման վրա, որը բնորոշում է կրիտիկական ուղին (նախագծման տևողությունը որոշող՝ ցանցային գրաֆիկի ամենաերկար ուղին, որպես կանոն՝ ճարտարապետաշինարարական բաժինը):
17. Տիպարային նախագծի տեղակապման դեպքում նորմատիվային տևողությունը որոշվում է անհատական նախագծի մշակման ընդհանուր տևողության թվից տոկոսով, հետևյալ չափերով՝

- 1) գրոյական ցիկլի վերամշակմամբ – 20 %, 2) առաջին, ոչ բնակելի հարկի նշանակության փոփոխությամբ – 30 %, 3) հարկայնության ավելացմամբ – 35 %:
18. Երկու և ավելի պայմանների առկայության դեպքում տեղակապման նախագծի ընդհանուր տևողությունն ընդունվում է 9-19-րդ և 22-27-րդ աղյուսակների ցուցանիշներով՝ կիրառելով 0,8 գործակից:
19. Տեղակապման նվազագույն տևողությունը պետք է կազմի կառուցապատման մեջ՝ 2 ամիս, իսկ առանձին հողամասում՝ 2.5 ամիս:
20. Տարբեր գործառական նշանակության օբյեկտների նախագծման տևողության նորմերը ներկայացված են 6-10 բաժինների աղյուսակներում
- 1) Տևողության նվազագույն արժեքներն ընդունվում են օբյեկտի՝ աղյուսակում նշված նվազագույն հզորությանը համապատասխան, իսկ միջանկյալ արժեքները որոշվում են միջարկման (ինտերպոլյացիայի) մեթոդով:
- 2) Աղյուսակում բերված հզորության առավելագույն արժեքը գերազանցող օբյեկտների նախագծման տևողությունը որոշվում է արտարկման (էքստրապոլյացիայի) մեթոդով:
- 3) Միջակայքային նշումով («մինչև», «-ից մինչև», «-ից ավելի») բերված հզորության դեպքում օբյեկտի նախագծման տևողությունն ընդունվում է աղյուսակում բերված այն արժեքով, որը համապատասխանում է հզորության որոշակի միջակայքին: Նախորդ միջակայքի երկրորդ թիվը որպես հաջորդ միջակայքի առաջին թիվ կրկնվելու դեպքում պետք է ընդունել, որ այդ թիվը ներառված է նախորդ միջակայքում, իսկ հաջորդ միջակայքի առաջին հաշվարկային թիվը պետք է գերազանցի դրան:
- 4) Միակ արժեքով բերված հզորության դեպքում այլ հզորություն ունեցող համանման օբյեկտի նախագծման տևողությունը որոշվում է ելնելով աղյուսակում բերված օբյեկտի մեկ միավոր հզորությանը համապատասխանող տևողության հաշվարկից (բացառությամբ ինժեներական ցանցերի՝ աղյուսակ 18):
21. Նախագծման տևողությունը նախատեսված է աշխատանքների կատարման հնգօրյա, երկու հանգստյան օրերով, 40-ժամյա աշխատանքային շաբաթվա պայմաններին համապատասխան:
22. Նախագծման տևողության սահմաններն են. սկիզբը՝ նախագծային աշխատանքների կապալի պայմանագրի կնքման ամսաթիվը, ավարտը՝ աշխատանքների ավարտի մասին պայմանագրով սահմանված կարգով պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը:
23. Նորմերի աղյուսակներում տեղ չգտած որևէ շենքի, շինության նախագծման տևողությունը, պատվիրատուի համաձայնությամբ, կարող է որոշվել աղյուսակներում ընդգրկված այլ օբյեկտի համանմանությամբ, ըստ գործառական նշանակության, հզորության, կամ այլ ցուցանիշի մոտարկման:
24. Նախագծային և հետազննական կազմակերպություններին տրվող նախագծային առաջադրանքների կազմում պարտադիր է փոխադարձ համաձայնեցված և սույն նորմերով հիմնավորված ժամանակացույցի (օրացուցային գրաֆիկի) առկայությունը:
25. Սույն նորմերով հաշվարկված նախագծային աշխատանքների տևողությունը ճշտվում է աղյուսակ 2-ում բերված ուղղիչ գործակիցների կիրառմամբ:

Աղյուսակ 2

Նախագծման տևողության ուղղիչ գործակից (K ուղղ)՝ կախված նախագծման փուլայնությունից

ՀՀ	Բարդացնող գործոններ	K ուղղ		
		Երկփուլ նախագծում		Միափուլ նախագծում՝ նախագիծ
		Նախագիծ	Աշխատանքային փաստաթղթեր	
1	2	3	4	5
11	Օբյեկտի տեղակայումը բարդ երկրաբանական պայմաններում՝ նստվածքային, փքվող գրունտներ, կարստային և սողանքային երևույթներ, հեղեղված տարածք	1,05	1,2	1,2

21	Բարդ նեղվածքային պայմաններով շինարարական իրապարակ, այդ թվում երբ օբյեկտը գտնվում է պատմամշակութային օբյեկտների տարածքում կամ մերձակայքում, պահպանվող լանդշաֆտների գոտիներում և այլն	1,3	1,3	1,3
31	Բարդ ճարտարագիտատեխնո լոգիական և ճարտարապետա քաղաքաշինական լուծումներով (եզակի) օբյեկտների նախագծում	1,3	1,5	1,5
41	Քաղաքաշինական մուտքային համալիրների նախագծում	1,05	-	-
51	Գծային և արտադրական մուտքային համալիրների նախագծում	1,2	1,05	1,05
61	Օբյեկտների վերապրոֆիլավորման նախագծում, այդ թվում տեխնիկական վերազինման և արդիականացման	-	1,15	1,15
71	Արդյունաբերական նշանակության օբյեկտների կամ համալիրների ընդլայնման և վերակառուցման նախագծում՝ գործող արտադրության պայմաններում	-	1,2	1,2
81	Վերակառուցման նախագծում, այդ թվում կառուցապատումների	1,1	1,3	1,3
91	Ճարտարապետական լուսավորման նախագծում	1,05	1,15	1,15
101	Ճակատների ճարտարապետական երանգավորման (կոլորիստիկայի) նախագծում	1,05	1,15	1,15
111	Նոր տիպարային նախագծերի մշակում	-	1,5	1,5
121	Ներկրվող սարքավորման հենքով օբյեկտի նախագծի առաջնային մշակում	1,3	1,3	1,3
131	Տեխնիկական փաստաթղթերի տեքստի և գծագրային գրառումների թարգմանում օտար լեզվի	1,1	1,05	1,05
141	Տեխնիկական փաստաթղթերի տեքստի և գծագրային գրառումների թարգմանում օտար լեզվից	1,03	1,03	1,03
151	Գծագրերի, մասնագրերի, հաշվարկների, աշխատանքների ծավալների, նախահաշվային փաստաթղթերի կրկնակի ստուգում, փաստաթղթերի ձևավորման և փաթեթավորման բարձր պահանջներ	1,2	1,1	1,1

16	Հայաստանի Հանրապետությունում ազգային ստանդարտի կարգավիճակով դեռևս չկիրառվող միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ստանդարտների և նորմերի կիրառում նյութերի, սարքավորումների վրա և հաշվարկներ իրականացնելիս, ինչը սահմանված է տեխնիկական առաջադրանքով	1,15	1,2	1,2
17	Նախագծում «գաղտնի» մակնանշմամբ	1,2	1,1	1,1
18. Ուղղիչ գործակիցները կետ 1-ում հաշվի են առնում բնահողերի հատկությունների բարելավման կամ դրանց փոխարինման նպատակով ճարտարագիտական միջոցառումների, հիմնատակերի ուժեղացման լուծումների, փլուզումներից, սողանքներից, հեղեղումներից պաշտպանիչ միջոցառումների նախագծման տևողությունները:				

5. ՄԻՆՉՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

26. Մինչև նախագծային փուլի աշխատանքների տևողությունը որոշվում է բազային ինժեներական հետազոնությունների տևողությունների հիման վրա՝ հաշվի առնելով դրանց հնարավոր համատեղումը:

27. Բազային ինժեներական հետազոնությունների (ինժեներագեոդեզիական, ինժեներաերկրաբանական, չափագրական-կոնստրուկտորական) նորմատիվային տևողությունները բերված են համապատասխանաբար աղյուսակներ 3-ում, 4-ում, 5-ում:

Աղյուսակ 3

Ինժեներագեոդեզիական հետազոնությունների նորմատիվային տևողություններ Մ1:500

ՀՀ	Աշխատանքների ծավալը, չափման միավորը հեկտար (հա)	Նորմատիվային տևողությունը, չափման միավորը օր
1	2	3
11	մինչև 1	7
21	1-2	12
31	2-5	17
41	5-10	23
51	10-15	27
61	15-20	29
71	20-25	33
81	25-30	35
91	30-35	39
101	35-50	48

- 11 Նախապատրաստական աշխատանքների (նախահաշվի մշակում, պայմանագրի կնքում, ֆոտոպատճենների պատրաստում և այլ նախապատրաստական աշխատանքներ) տևողությունները ժամանակի նորմի մեջ չեն մտնում:

12. Անբարենպաստ եղանակային ժամանակաշրջանում դաշտային պայմաններում ինժեներագեոդեզիական հետազննությունների նորմատիվային տևողությունն ավելացվում է 20%-ով, ռեժիմային տարածքներում դաշտային աշխատանքներ իրականացնելիս՝ 10%-ով: Նման պայմաններում մեկ ամիսը գերազանցող հարկադրված պարապուրդի դեպքում պետք է կատարել պայմանագրային ժամկետի ճշգրտում:

13. 50 հա գերազանցող տեղամասերում հետազննությունների նորմատիվային տևողությունը հաշվարկվում է անհատական կարգով:

14. Ինժեներագեոդեզիական հետազննությունների իրականացման ժամանակ Մ1:200 հատակագծի մշակման դեպքում նորմատիվային տևողությունն աճում է 2 անգամ:

15. Մ 1:2000 հատակագծերի մշակման դեպքում նորմատիվային տևողությունը բազմապատկվում է 0.8-ով:

16. Լեռնային պայմաններում ինժեներա-գեոդեզիական հետազննություններ իրականացնելու դեպքում նորմատիվային տևողությունն աճում է 10%-ով, բարձր լեռնային՝ 20% -ով, քաղաքային կառուցապատման պայմաններում՝ 25%-ով:

Աղյուսակ 4

Ինժեներակրաքանական հետազննությունների նորմատիվային տևողություններ

ՀՀ	Աշխատանքների ծավալը	Նորմատիվային տևողությունը, օր
1	2	3
11	Մյունակային հորատում և վերականգնման աշխատանքներ, հորատանցքի խորությունը մինչև 10 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	1	3
2)	2	5
3)	3	8
4)	4	10
5)	5	13
6)	6	15
7)	7	18

8)	8	19
9)	9	20
10)	12	20
11)	15	21
12)	18	22
21	Սյունակային հորատում և վերականգնման աշխատանքներ, խորությունը մինչև 15 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	1	4
2)	2	8
3)	3	12
4)	4	16
5)	5	20
6)	6	20
7)	7	21
8)	8	21
9)	9	21
10)	12	27
11)	15	29
12)	18	29
31	Սյունակային հորատում և վերականգնման աշխատանքներ, խորությունը մինչև 20 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	1	5
2)	2	10

3)	3	15
4)	4	20
5)	5	24
6)	6	25
7)	7	26
8)	8	27
9)	9	28
10)	12	29
11)	15	30
12)	18	35
41	Սյունակային հորատում և վերականգնման աշխատանքներ, խորությունը մինչև 30 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	1	8
2)	2	15
3)	3	21
4)	4	23
5)	5	25
6)	6	28
7)	7-8	31
8)	9-12	32
9)	13-15	46

10) Ստատիկ, դինամիկ, երկրաֆիզիկական հետազոտությունների նպատակով լրացուցիչ զոնդավորման ղեկավարում 1-4 կետերում բերված տևողությունները բազմապատկվում են 1,3 գործակցով:		
51	Սյունակային հորատում և վերականգման աշխատանքներ, դեֆորմացիայի մոդուլի որոշման համար 600սմ ² մակերեսով բնահողի դրոշմների փորձարկում, հորատանցքի խորությունը մինչև 15 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	4	24
2)	6	30
3)	8	31
4)	12	39
5)	15	41
6)	18	47
61	Սյունակային հորատում և վերականգման աշխատանքներ, դեֆորմացիայի մոդուլի որոշման համար 600 սմ ² մակերեսով բնահողի դրոշմների փորձարկում, հորատանցքի խորությունը մինչև 20 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	4	31
2)	6	38
3)	8	41
4)	12	51
71	Սյունակային հորատում և վերականգման աշխատանքներ, դեֆորմացիայի մոդուլի որոշման համար 600 սմ ² մակերեսով բնահողի դրոշմների փորձարկում, հորատանցքի խորությունը մինչև 40 գծամետր, հորատանցքերի քանակը	
1)	1	23
2)	2	35
3)	3	46
4)	4	53

8. Նախապատրաստական աշխատանքների (նախահաշվի մշակում, պայմանագրի կնքում, ֆոտոպատճենների պատրաստում և այլ նախապատրաստական աշխատանքներ) տևողությունները ժամանակի նորմի մեջ չեն մտնում:
- 9 Անբարենպաստ եղանակային ժամանակաշրջանում դաշտային պայմաններում ինժեներաերկրաբանական հետազոնությունների նորմատիվային տևողությունն ավելացվում է 15%-ով, ռեժիմային տարածքներում դաշտային աշխատանքներ իրականացնելիս՝ 10%-ով: Նման պայմաններում մեկ ամիսը գերազանցող հարկադրված պարապուրդի դեպքում պետք է կատարել պայմանագրային ժամկետի ճշգրտում:
10. 2 և ավելի կայանքներով հորատման աշխատանքների կատարման դեպքում նորմատիվային տևողությունը հաշվարկվում է անհատական կարգով:
11. Ինժեներաերկրաբանական հետազոնությունների իրականացման ստորև բերված եղանակների դեպքում պունակային հորատման համապատասխան նորմատիվային տևողության նկատմամբ կիրառվում են հետևյալ գործակիցները՝
- 1) 1,3՝ հարվածաճռպանային հորատում,
 - 2) 0,8՝ պտուտակրչային (շնեկային) հորատում,
 - 3). 1,0՝ պնևմահորատում:

Աղյուսակ 5

Չափազրական-կոնստրուկտորական հետազոնությունների նորմատիվային տևողություններ

ՀՀ	Ընդհանուր աշխատանք՝ բնական չափամբ	Նորմատիվային տևողություն, օր
1	2	3
1I	1000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	մինչև 4	14
2)	4-7	19
2I	3000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	մինչև 4	17
2)	4-7	21
3)	7-10	24
3I	5000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	մինչև 4	19
2)	4-7	33

3)	7-10	27
4)	10-13	29
4I	7000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	մինչև 4	25
2)	4-7	27
3)	7-10	29
4)	10-13	31
5)	13-16	34
5I	9000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	մինչև 4	28
2)	4-7	29
3)	7-10	32
4)	10-13	35
5)	13-16	39
6)	16-20	43
6I	11000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	30
2)	7-10	33
3)	10-13	36
4)	13-16	41
5)	16-20	44

6)	20-ից ավելի	46
7I	13000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	33
2)	7-10	36
3)	10-13	40
4)	13-16	44
5)	16-20	46
6)	20-ից ավելի	47
8I	15000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	35
2)	7-10	39
3)	10-13	42
4)	13-16	47
5)	16-20	49
6)	20-ից ավելի	52
9I	19000մ ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	41
2)	7-10	47
3)	10-13	49
4)	13-16	52
5)	16-20	55

6)	20-ից ավելի	58
10I	21000մ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	43
2)	7-10	48
3)	10-13	52
4)	13-16	55
5)	16-20	52
6)	20-ից ավելի	60
11I	23000մ³ ծավալով շենքեր, բարձրությունը, մ	
1)	4-7	48
2)	7-10	52
3)	10-13	55
4)	13-16	52
5)	16-20	60
6)	20-ից ավելի	63
12. Նախապատրաստական աշխատանքների (նախահաշվի մշակում, պայմանագրի կնքում, ֆոտոպատճենների պատրաստում և այլ նախապատրաստական աշխատանքներ) տևողությունները ժամանակի նորմի մեջ չեն մտնում: 13. Անբարենպաստ եղանակային ժամանակաշրջանում չափազրական-կոնստրուկտորական հետազննությունների նորմատիվային տևողությունն ավելացվում է 15%-ով, ռեժիմային տարածքներում՝ 10%-ով, նեղվածքային պայմաններում՝ և շահագործվող բնակելի շենքերում՝ 10%-ով, բարձրության վրա կոնստրուկցիաներ հետազննելիս աստիճանների և սանդուղքների կիրառման դեպքում՝ 15%-ով: Նման պայմաններում 10 (տաս) օրը գերազանցող հարկադրված պարապուրդի դեպքում պետք է կատարել պայմանագրային ժամկետի ճշգրտում: 14. Մի քանի բրիգադներով չափազրական-կոնստրուկտորական աշխատանքներ իրականացնելիս՝ նախագծման տևողությունը հաշվարկվում է անհատական կարգով:		

Բնակավայրերի (համայնքների) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման տևողության նորմեր

Հ/Հ	Բնակչությունը, հազար մարդ	Երկփուլ նախագծում, Ամիս		Միափուլ նախագծում, Ամիս
		Հայեցակարգ	Գլխավոր հատակագիծ	Գլխավոր հատակագիծ
1	2	3	4	5
1I	մինչև 5	-	-	9,0
2I	5-ից մինչև 15	-	-	10,0
3I	15-ից մինչև 25	-	-	11,0
4I	25-ից մինչև 50	-	-	12,0
5I	50-ից մինչև 100	-	-	13,0
6I	100-ից մինչև 200	-	-	14,0
7I	200-ից մինչև 500	6,0	10,0	-
8I	Երևան քաղաք	9,0	14,0	-

Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման աշխատանքների տևողության նորմեր

Հ/Հ	Տարածքի չափման միավորը (հեկտար)	Նորմատիվային տևողությունը, Ամիս
1	2	3
1I	մինչև 100	4,0
2I	101-ից մինչև 300	5,0
3I	301-ից մինչև 500	6,0
4I	501-ից մինչև 1000	8,0

5I	1001-ից մինչև 2500	11,0
6I	2501-ից մինչև 6000	14,0
7. Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում մշակվող գոտևորման /նախագծային/ աշխատանքների տևողության նորմատիվային ժամկետը նվազեցվում է 50%- ի չափով, իսկ բնակավայրի գլխավոր հատակագծի կազմում մշակվողների համար՝ 25%-ի չափով:		

7. ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

Աղյուսակ 8

Միկրոշրջանների (թաղամասերի), քաղաքաշինական համալիրների կառուցապատման նախագծում՝ ներառյալ ինժեներական ցանցերը, բարեկարգումը, տարածքի նախապատրաստումը (առանց բնակելի շենքերի, մշակութային և կրթական նշանակության օբյեկտների տեղակայման)

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
1	2	3	4	5
1I	Բազմահարկ կառուցապատում (9 հարկից ավելի) մինչև 25 հազար մ ² ընդհանուր մակերեսով	4,0	4,5	7,0
2I	Նույնը՝ 26-50 հազար մ ² ընդհանուր մակերեսով	4,0-5,0	4,5-6,0	7,0-8,5
3.	Նույնը՝ 51-75 հազար մ ² ընդհանուր մակերեսով	5,0-5,5	6,0-7,0	8,5-9,5
4.	Նույնը՝ 76-125 հազար մ ² ընդհանուր մակերեսով	5,5-6,0	7,0-8,0	9,5-10,0
5.	Նույնը՝ 125 հազար մ ² -ից ավելի ընդհանուր մակերեսով	6,0-6,5	8,0-8,5	10,0-10,5
6I	Միջին հարկայնության կառուցապատում (4-8 հարկ) մինչև 15 հազար մ ² ընդհանուր մակերեսով	4,5	5,0	8,0
7I	Նույնը՝ 16-75 հազար մ ² ընդհանուր մակերեսով	4,5-6,5	5,0-7,5	8,0-10,0
8I	Նույնը՝ 75 հազար մ ² -ից ավելի ընդհանուր մակերեսով	6,5-7,5	7,5-8,5	10,0-11,0
9I	Ցածրահարկ կառուցապատում (մինչև 4 հարկ) մինչև 5 հազար մ ² ընդհանուր մակերեսով	1,5	2,0	2,5

10.	Նույնը՝ 6-35 հազար մ ² ընդհանուր մակերեսով	1,5-3,0	2,0-3,5	2,5-5,0
11.	Նույնը՝ 35 հազար մ ² -ից ավելի ընդհանուր մակերեսով	3,0-4,0	3,5-4,5	5,0-6,0
12. Միկրոշրջանի, թաղամասի 30 % -ը գերազանցող մակերեսի վրա ստորև բերված բարդացնող գործոնների առկայության դեպքում կիրառել գործակիցներ՝ 1) գոյություն ունեցող պահպանվող կառուցապատման դեպքում՝ 1,2, 2) թաղամասում զգալի ծավալի գոյություն ունեցող և վերատեղադրվող կոմունիկացիաների առկայության դեպքում՝ 1,1:				

Աղյուսակ 9

Բնակելի նշանակության շենքեր

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
1	2	3	4	5
11	1-3 հարկանի առանձնատներ և բլոկացված տներ մինչև 400մ ² ընդհանուր մակերեսով	-	-	3,0
2	Նույնը՝ 400մ ² -ից ավելի ընդհանուր մակերեսով	-	-	3,5
3.	1- 3 հարկանի սեկցիոն շենքեր մինչև 2000մ ² ընդհանուր մակերեսով	-	-	4,0
4.	Նույնը՝ 2000մ ² -ից ավելի ընդհանուր մակերեսով	-	-	5,0
5.	4-6 հարկանի կետային շենքեր մինչև 2500մ ² ընդհանուր մակերեսով	2,5	3,5	-
61	4-6 հարկանի սեկցիոն շենքեր 2500-5000մ ² ընդհանուր մակերեսով	3,0	4,0	-
7.	7-10 հարկանի կետային շենքեր մինչև 4000մ ² ընդհանուր մակերեսով	3,0	5,0	-
81	7-10 հարկանի սեկցիոն շենքեր 4000-12000մ ² ընդհանուր մակերեսով	3,5	5,5	-

9	11-16 հարկանի կետային շենքեր մինչև 6500մ² ընդհանուր մակերեսով	3,5	6,0	-
10	11-16 հարկանի սեկցիոն շենքեր 6500-13000մ² ընդհանուր մակերեսով	4,0	6,0	-
11	17-20 հարկանի շենքեր մինչև 12000 մ² ընդհանուր մակերեսով	4,0	6,5	-
12	21-25 հարկանի շենքեր մինչև 15000 մ² ընդհանուր մակերեսով	5,0	7,0	-
13	Բազմաբնակարան շենքերում՝ հարկերում տարբերվող հատակագծային լուծումների դեպքում կիրառել 1,2 գործակից:			

Աղյուսակ 10

Գիտական, կրթական և ուսումնական նշանակության շենքեր

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
1	2	3	4	5
1	Գիտական, գիտահետազոտական գործունեություն ծավալող կազմակերպությունների շենքեր և շինություններ՝ աշխատակիցների մինչև 200 թվով	4,5	5,5	7,0
2	Նույնը՝ աշխատակիցների 201-ից-500 թվով	5,5	6,0	
3	Նույնը՝ աշխատակիցների 500-ից ավելի թվով	6,0	6,5	-
4	Նախադպրոցական նշանակության շենքեր և շինություններ (մանկապարտեզ, մսուր-մանկապարտեզ)՝ մինչև 50 տեղով	2,0	2,5	-
5	Նույնը՝ 51-95 տեղով	3,0	3,5	-
6	Նույնը՝ 96-140 տեղով	3,5	4,0	-
7	Նույնը՝ 141-280 տեղով	4,0	4,5	-

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
8	Նույնը՝ 280-ից ավելի տեղով	4,5	4,5	-
9.	Հանրակրթական դպրոց (տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ)՝ մինչև 120 սովորողի համար	4,5	5,0	-
10.	Նույնը՝ 121-250 սովորողի համար	5,0	5,5	-
11.	Նույնը՝ 250-500 սովորողի համար	5,5	6,0	-
12.	Նույնը՝ 500-1000 սովորողի համար	6,0	6,0	-
13.	Ուսումնական մասնաշենք-կցակառույց՝ մինչև 300 սովորողի համար	3,0	3,5	-
14.	Նույնը՝ 300-ից ավելի սովորողի համար	3,0	4,0	-
15.	Վարժարան, մասնագիտացված դպրոց, կրթական համալիր, քոլեջ, նախնական մասնագիտական ուսումնարան, միջին մասնագիտական ուսումնարան՝ 500-1000 սովորողի համար	4,5	5,5	-
16.	Բարձրագույն կրթական նշանակության շենք*՝ 500-1000 սովորողի համար	7,0	7,5	-
17.	Նույնը՝ 1000-ից ավելի սովորողի համար	7,5	8,0	-

Աղյուսակ 11

Առողջապահության, սոցիալական նշանակության շենքեր և շինություններ

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
1	2	3	4	5

11	Հիվանդանոց (այդ թվում մանկական), հոսպիտալ՝ մինչև 100 մահճակալով	5,0	5,5	-
21	Նույնը՝ 100-200 մահճակալով	5,5	6,0	-
31	Նույնը՝ 250-500 մահճակալով	6,0	7,0	-
41	Դիսպանսեր սրտաբանական ստացիոնարով՝ 240 մահճակալով	6,0	6,5	-
51	Դիսպանսեր ուռուցքաբանական ստացիոնարով՝ 450 մահճակալով	7,0	7,5	-
61	Ծննդատուն՝ 100 մահճակալով	5,0	6,0	-
71	Բուժական մասնաշենք հիվանդանոցների ընդլայնման համար՝			
1)	Թերապևտիկ՝ մինչև 50 մահճակալով	3,0	3,5	-
2)	Նույնը՝ 50-100 մահճակալով	3,5	4,0	-
3)	Վիրաբուժական, օրթոպեդիկ և վնասվածքաբանական՝ մինչև 50 մահճակալով	4,0	4,5	-
4)	Նույնը՝ 50-100 մահճակալով	4,5	5,0	-
5)	Ինֆեկցիոն (այդ թվում մանկական)՝ մինչև 50 մահճակալով	5,0	5,5	
6)	Նույնը՝ 50-100 մահճակալով	5,5	6,0	-
81	Արագ կառուցվող բուժական մասնաշենք՝ թերևս կոնստրուկցիաներից կամ մոդուլային շենքի տեղակայում	-	-	1,5
91	Պոլիկլինիկա, ամբուլատորիա՝ օրական 320 հաճախումով	4,5	5,0	-
101	Նույնը՝ 750 հաճախումով	5,0	6,5	-
111	Վերականգնողական, ախտորոշման կենտրոններ՝ օրական 320 հաճախումով	5,0	6,0	-
121	Շտապ բժշկական օգնության կայան՝ 20 մեքենատեղով	2,0	1,5	3,5
131	Դիսպենսարան՝ 300 մ ² ընդհանուր մակերեսով	4,0	4,5	-
141	Դեղատուն, օպտիկա՝ 10 աշխատատեղով	2,5	3,0	3,5

15	Նույնը՝ 30 աշխատատեղով	2,5	4,0	4,5
16	Մանկատան համալիր՝ 250 տեղով	3,5	4,5	5,0
17	Դպրոց-ինտերնատ՝ 350-500 աշակերտական տեղով	6,0	6,5	-
18	Սոցիալական սպասարկման և խնամքի կենտրոններ՝ 1000մ² ընդհանուր մակերեսով	2,0	2,5	-
19	Նույնը՝ 2000մ² ընդհանուր մակերեսով	4,0	5,0	-
20	Առողջարանային համալիր՝ մինչև 5000 մ² ընդհանուր մակերեսով	6,0	7,5	
21	Նույնը՝ 5000մ²-ից ավելի ընդհանուր մակերեսով	6,5	8,0	-

Աղյուսակ 12

Սպորտի, հանգստի և ժամանցի շենքեր և շինություններ

ՀՀ	Օբյեկտի անվանումը, նկարագիրը, հզորությունը	Նախագծման տևողությունն ըստ փուլերի, ամիս		
		Երկփուլ		Միափուլ
		Ն	ԱՓ	ԱՆ
1	2	3	4	5
1	Ծածկած սպորտային դահլիճ 450մ² մակերեսով	2,5	3,5	4,5
2	Նույնը՝ 650մ² մակերեսով	3,0	4,5	5,5
3	Նույնը՝ 1000մ² մակերեսով	3,5	5,0	6,5
4	Մարմնակրթական, սպորտային կենտրոն, դահլիճի (դահլիճների) 400-1000մ² մակերեսով	4,0	5,0	6,5
5	Նույնը՝ 1000մ²-ից ավելի մակերեսով	4,5	5,5	-
6	Ծածկած լողավազան՝ ջրի հայելու մինչև 400մ² մակերեսով	3,5	4,5	5,5
7	Նույնը՝ ջրի հայելու 400-1000մ² մակերեսով	5,0	6,0	8,5

